

Ընդհանուր դրույթներ և պայմաններ

1. Սույն ընդհանուր դրույթները և պայմանները, այսուհետ՝ (Պայմաններ) սահմանում և կարգավորում են «Էդիթ Պրինտ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն, Մենք, «Էդիթ Պրինտ») editprint.am դոմեն հասցեում գործող կայքով (այսուհետ՝ Կայք, «editprint.am») ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ու էլեկտրոնային առևտրի հետ կապված իրավահարաբերությունները: Ընկերությունը Կայքի միջոցով իրականացնում է նաև էլեկտրոնային առևտրի ծառայություններ, որի միջոցով առաջարկվող ապրանքները ձեռք բերելիս կնքվում է էլեկտրոնային պայմանագիր (այսուհետ նաև օնլայն գնում)՝ Պայմաններին համապատասխան:
2. Մուտք գործելով Կայք, օգտագործելով Կայքի ցանկացած ծառայություն կամ ներբեռնելով ցանկացած բովանդակություն՝ ամբողջությամբ կամ դրա մի մասը Դուք, որպես օգտագործող (այսուհետ նաև Օգտագործող, Դուք, Ձեզ, Ձեր, Հաճախորդ), հաստատում եք, որ ամբողջությամբ կարդացել և հասկացել եք սույն օգտագործման պայմանները և անվերապահորեն ընդունում եք դրանք, անկախ այն բանից՝ Դուք Ընկերության կողմից մատուցվող Ծառայությունների հաճախորդ եք, թե Կայքի գրանցված օգտագործող: Կայքի գրանցված հաճախորդներին վերաբերող կանոնները վերաբերում են միայն գրանցված անձանց, որոնք հնարավորություն են ստանում օգտվելու Կայքում առաջարկվող լրացուցիչ հնարավորություններից:
3. Կայքում գրանցվելու նպատակով Հաճախորդը, տրամադրելով իր անձնական տվյալները, բացում է անհատական հաշիվ Կայքում ներկայացված գրանցման ընթացակարգի միջոցով, որից հետո ստանում է մուտքանուն և գաղտնաբառ: Հաճախորդը պարտավորվում է ճիշտ տվյալներ լրացնել, պատասխանատվություն է կրում իր անհատական հաշվի օգտագործման համար, և անհատական հաշվով կատարված բոլոր գործողությունները համարվում են Հաճախորդի կողմից կատարված: Գրանցման ընթացքում Հաճախորդի տրամադրած անձնական տվյալները օգտագործվում են Պայմաններով և Գաղտնիության քաղաքականությամբ սահմանված ձևով: Պայմանների ցանկացած խախտման դեպքում Ընկերությունն

իրավունք ունի արգելափակելու Հաճախորդի անհատական հաշիվը և արգելելու տվյալ Հաճախորդին օգտվելու Կայքի հնարավորություններից:

4. Ընկերությունն իրավունք ունի առանց նախապես ծանուցման, միակողմանի, ցանկացած պահի փոփոխել կամ լրացնել սույն Պայմանները: Պայմանների փոփոխության կամ լրացման դեպքում Ընկերությունը կհրապարակի նորացված Պայմանները ինտերնետային Կայքում՝ նշելով վերջին փոփոխության ամսաթիվը: Օգտագործողի պարտականությունն է ժամանակ առ ժամանակ այցելել Կայք և ստուգել Պայմանների փոփոխությունները: Կայքից օգտվելու համար նոր պայմանները պարտադիր են դրանք հրապարակելուց հետո:
5. Վեճերի դեպքում Կողմերը պարտավոր են նախաձեռնել վեճի արտադատական լուծման ընթացակարգ՝ պահանջատեր կողմի գրավոր կամ էլեկտրոնային փոստով ներկայացվող դիմումի հիման վրա, որի ժամկետը սահմանվում է պահանջատիրոջ դիմումը ներկայացնելու պահից երկու շաբաթ: Կայքից օգտվելու հետ կապված վեճերը ընդդատյա են Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին:

Ընկերության կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունները

- Ընկերությունը «editprint.am» կայքի միջոցով մատուցում է օնլայն գնումների ծառայություն, որի միջոցով կայքի այցելուները հնարավորություն ունեն ձեռք բերելու կայքում ներկայացված ապրանքները և պատվիրելու առաքում, որի բնութագիրը, պայմաններն ու գինը նշվում են Կայքում:
- Կայքում առաջարկվում են նաև այլ ծառայություններ ու հնարավորություններ, ներառյալ՝ միջոցառումներին գրանցման ծառայություն, հրապարակվում են նորություններ, տրվում է հնարավորություն մեկնաբանություններ անելու գրքերի վերաբերյալ ու մասնակցելու քննարկումներին և այլն: Կայքում առաջարկվող ծառայությունները կարող են վճարովի լինել, որի վերաբերյալ տեղեկությունը հրապարակվում է Կայքում. հաճախորդը տեղեկանում է դրա մասին մինչ

ծառայությունից օգտվելը՝ հնարավորություն չունենալով օգտվելու նման ծառայությունից առանց վճարման:

- Առցանց առևտրի և այլ վճարովի ծառայությունների դիմաց վճարման ձևի մասին տեղեկությունը հրապարակվում է Կայքում: Կայքում տվյալների լրացումը, ապրանքի կամ ծառայության ընտրությունը, դրա դիմաց վճարումը համարվում է դրա վերաբերյալ պայմանագրի ձեռագիր ստորագրությանը հավասարազոր: Վճարման վերաբերյալ Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է էլեկտրոնային հավաստում կամ ձեռքբերված ապրանքի հետ միաժամանակ տրվում է կտրոն, որը հավաստում է գործարքի կնքումը:
- Քննարկումներ, մեկնաբանություններ և Կայքում հրապարակային այլ արտահայտություններ անելիս Հաճախորդները պարտավոր են հարգել Ընկերության, վերջինիս աշխատակիցների, Կայքի այլ օգտատերերի և այլ անձանց իրավունքները, չանել վերջիններիս պատիվը, արժանանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող, թշնամանք կամ բռնություն քարոզող կամ հակասօրինական կոչեր պարունակող որևէ հրապարակումներ:
- Ընկերության կողմից մատուցվող Ծառայություններից ողջ ծավալով օգտվելու համար Դուք պետք է գրանցվեք Կայքում և բացեք անհատական հաշիվ Կայքում նշված գրանցման գործընթացի միջոցով, առանց որի Կայքի որոշ ծառայություններ կարող են անհասանելի լինել: Յուրաքանչյուր Օգտատեր կարող է ունենալ մեկ Հաշիվ: Օգտատերերն իրավունք չունեն օգտագործել այլ անձի անհատական հաշիվը: Օգտատերը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ընկերությանը, եթե վստահ է, որ իր Հաշիվ եղել է չթույլատրված մուտք, որի դեպքում Ընկերությունը իրավունք ունի անմիջապես արգելափակելու հաշիվը:

Գնումներ և առաքում

- Հաճախորդը գնումներ կատարում է անկանխիկ (քարտային վճարում, էլեկտրոնային դրամապանակ) տարբերակով:
- Պատվերը կատարելիս Հաճախորդը պարտավոր է հաշվին ունենալ բավարար միջոցներ նշված ապրանքը գնելու համար, եթե Հաճախորդը պատրաստվում է կատարել անկանխիկ գնում:

- Ընկերությունն իրավունք ունի այն ժամանակահատվածում, երբ պատվերների ընդհանուր ծավալը մեծանում է (տոնական օրեր, զեղչային ծրագրեր, միջոցառումներ և այլն) հետաձգելու պատվերների առաքման ժամկետները, ինչպես նաև կասեցնելու որոշակի Ծառայությունների մատուցումը՝ այդ մասին տեղեկացնելով Հաճախորդին Կայքում հրապարակման կամ անհատական հաղորդագրության միջոցով:
- Ընկերության կողմից հայտարարված ընդհանուր առաքման ժամկետները պայմանական են, դրանց խախտման համար Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում: Յուրաքանչյուր պատվերի համար Ընկերությունը տեղեկացնում է Հաճախորդին տվյալ պատվերի առաքման ժամկետի մասին:
- Պատվերը ուղարկվում է հասցեատիրոջը միայն պատվերը հաստատվելուց հետո: Ներկայացված տեսականին հնարավոր է ամբողջական չլինի, պատվիրված ապրանքի խանութում առկա չլինելու դեպքում պատվերը չեղարկվում է և օգտատիրոջ գումարը վերադարձվում է, եթե նախապես գանձվել էր:
- Առաքման գումարը կախված է առաքման հասցեից և առաքվող ապրանքի քաշից, ինչպես նաև տվյալ պահին գործող ակցիաներից:
- Ապրանքի վերադարձի կամ փոխանակման հետ կապված հարցերով խնդրում ենք այցելել Ընկերության գրախանութ:
- Չգրանցված հաճախորդների պատվերները կարող են չեղարկվել, եթե անհրաժեշտ տվյալները ճշգրիտ լրացված չեն:

Հեղինակային իրավունք

- Կայքում ներկայացված ցանկացած նյութ՝ վիզուալ/տեսողական և տեքստային, պատկանում է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ին և պաշտպանված է հեղինակային իրավունքով:
- Ցանկացած մեջբերում կատարելիս պարտադիր է նշել «editprint.am» կայքը՝ որպես նյութի աղբյուր:
- Վիզուալ/տեսողական նյութերի՝ օրենքով նախատեսված թույլատրելի ծավալով օգտագործելիս արգելվում է ջնջել ընկերության տարբերանշանը, տարբերանշանի բացակայության դեպքում նյութի աղբյուրը («editprint.am» կայքը) նշելը պարտադիր է:
- Ընկերությանը պատկանող նյութերը առևտրային նպատակներով օգտագործելը կամ ամբողջ ծավալով կրկնօրինակելը կամ

տարածելը արգելվում է և հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

- Հեղինակային իրավունքների պաշտպանությունը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով սահմանված կարգով:

«Էդիթ Պրինտ» ՍՊԸ

Հասցե. Ք. Երևան, Դավիթ Մալյան 43

Հեռ. +374 10 520848, +374 95 520848

Էլ հասցե. webshop@editprint.am